

Ա. Արշարունի

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ
19-րդ ԴԱՐԻ 50—60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Մեծանուն ուսուցիչական-վերաբույժ Ն. Ի. Պիրոգովը Ռուսաստանի համալսարանների, մասնավորապես Մոսկվայի համալսարանի ուսանողության դերը 50—60-ական թվականների հասարակական-մտավորական կյանքում, գիտակի կերպով ընդթափել է որպես հասարակության բարո-մետք։

Արդարեւ, 19-րդ դարի 50—60-ական թվականներին Մոսկվայի համալսարանի ուսանողները ամենաակտիվ կերպով միջամտել են հասարակա-կան-քաղաքական կյանքին։

Բնորոշ է Մոսկվայի համալսարանի ուսանողության աճը՝ 1855 թվա-կանից սկսած։

1865 թվականին Մոսկվայի համալսարանը ուներ 1203 ուսանող, որից 30-ը հայ, 1866 թվականին՝ 1455 ուսանող, 1871 թվականին՝ 1522, 1882 թվականին՝ 2598, որից 56-ը հայ, 1887 թվականին՝ 3250, որից 66-ը հայ։

Ցարական կառավարությունը խստագույն կանոններ էր սահմանում համալսարանի համար՝ կանխելու ուսանողական շարժումները։

Չորս տարվա ընթացքում (1858—1861) հետեյալ միջոցառումներին գիմեց կառավարությունը՝ ուսանողներին զգուշացնելով, նրանց մասնակցու-թյունը քաղաքական պայքարում չեզոքացնելու, նրանց նյութապես և բա-րոյապես ընկճելու համար։

1858 թվականի որոշման համաձայն ուսանողը զրկվում էր համալսա-րանում որեւէ հարցի մասին բողոք կամ կարծիք հայտնելու իրավունքից։

1859 թվականին հայտարարվեց կառավարական որոշում, որի համա-ձայն ուսանողը համալսարանից դուրս գտնվում էր ոստիկանության հըս-կողովյալ տակ։

1860 թվականին փոփոխվեց համալսարան ընդունվելու կարգը. նոր որոշմամբ 18 տարեկան հասակից ցած ոչ ոք չէր կարող ընդունվել հա-մալսարան։

Մոսկվայի համալսարանի խորհուրդը ուսանողության համար սահ-մանեց կանոններ, որի համաձայն՝

- ա) ուսանողական ժողովները, համաքույրները արգելվում էին.
 - բ) արգելվում էին հանրային ելույթները, ճառերը, ինչպես և թիշնա-մական գրվածքներին տարածումը.
 - գ) յուրաքանչյուր տարի ուսանողը պիտի խոստովաներ և հաղորդվեր.
 - դ) արգելվում էր ուսանողին բեխ, մորուք և երկար մազեր կրել
- և այլն։

1861 թվականի մայիսին ընդունվեցին «մայիսյան կանոնները», որոնք ռեակցիայի բացահայտ արտահայտություններն էին և կտրականապես արգելում էին ուսանողական կադմակերպությունները, ժողովները, հավաքությունները:

Համաձայն «մայիսյան կանոնների» չփափոր ուսանողներին ուսման վճարից ազատելու արտոնությունը վերացվում էր:

Այս նշանակալից փաստը ցույց է տալիս, որ կառավարությունը իր կրակը ուղղել էր դեմոկրատիկ տարրերի դեմ, նրանց մուտքը համալսարանի դժվարացնելու, նույնիսկ բոլորովին արգելելու համար:

1861 թ. աշնանը սկսվում է ուսանողության ցույցը, ուղղված «մայիսյան կանոններ» դեմ: Պետերբուրգի համալսարանի ուսանողները առաջինը դուրս են գալիս այդ կանոնների դեմ: Նրանց միանում են և Մոսկվայի համալսարանի ուսանողները, ինքնակալության համար ստեղծելով լուրջ դրույթներ: Այս բոլորը վերջացավ նրանով, որ 1861 թ. հոկտեմբերի 12-ին Մոսկվայի փողոցներում հոսեց ուսանողների արյունը և թվով 500 ուսանողներ ծեծված և արյունոտ նետվեցին բանտ:

Մենք նշեցինք չորս տարվա ընթացքում (1858—1861) կառավարության և համալսարանների ղեկավարության միջոցառումներից մի քանիսը, որոնք միասին վերցրած մի նպատակ էին հետապնդում՝ երկրում ծավալվող ռեվոլյուցիոն շարժումից ուսանողությանը հետ պահել, զրկել նրան քաղաքական պայքարին մասնակցելու հնարավորությունից, դեմոկրատական գաղափարներով տարված ուսանողներին զրկել նյութական միջոցներից, փակել համալսարանի դռները չփափոր տարրերի առաջ:

Չնայած այս կտրուկ միջոցառումներին և քաղաքական հետապնդումներին, Մոսկվայի համալսարանի ուսանողությունը ակտիվ մասնակցություն է ունենում քաղաքական կյանքին:

1857 թվականի աշնանը Մոսկվայի համալսարանի ուսանողական շրջաններում առաջանում են խմբակներ, որոնք ծանոթանում և ուսումնասիրում են Դերցենի, Չերնիշևսկու, Բորոյսկոյի դրական-հասարակական գործերը, ինչպես և արևմտաեվրոպական ուսուցիչներ Սեն-Սիմոնի, Ֆուրիեի գրվածքները:

Մեկը մյուսի հետևից տեղի են ունենում ընդհարումներ, ցույցեր:

1857 թվականի աշնանը, սեպտեմբեր ամսին Մոսկվայի համալսարանի մի խումբ ուսանողներ հավաքվում են Դանուսևիչ ազգանունով ուսանողի տանը, այսպես կոչյալ, «вечеринка»-ի: Սրբազան քաղաքապետի ոստիկանները հարձակվում են ուսանողների վրա, ծեծում են նրանց, երեք ուսանողի բանտարկում: Լուրը կայծակի արագությամբ հասնում է համալսարան: Ուսանողությունը անմիջապես մեկնում է Սրբազանի ոստիկանատունը և ազատում ձերբակալված երեք երիտասարդներին:

Համալսարանում կազմակերպում են միտինգներ, ժողովներ, որտեղ ճառախոսները պահանջ են դնում՝ վերջ տալ ոստիկանության կամայականությունները:

Գեներալ-նահանգապետ Ջակրևսկին Ալեքսանդր Վ-ին ղեկուցագիր է ուղարկում, որտեղ նա գրում է, թե Մոսկվայի համալսարանում սկսվել է ապստամբություն:

1858 թվականին բժշկական ֆակուլտետում բռնկվում է ուսանողա-

կաս դժգոհություն, որը անմիջապես վերածվում է համաուսանողական շարժման: Այդ շարժման առիթը հետևյալն էր.

Վարենկի ազգանունով մի տղետ պրոֆեսոր բժշկական ֆակուլտետի առաջին կուրսում կարգում է անատոմիայի, դոլորգիայի դասախոսություններ: Ուսանողները, որոնք վաղուց դժգոհ են եղել նրանից, պահանջում են հեռացնել նրան համալսարանից: Այս պահանջը մերժվում է: Ուսանողները դիմում են այլ միջոցի: Հերթական դասախոսություն ժամանակ նրանք սուլում են, աղմկում և այդ ձևով լսարանից փախցնում Վարենկին:

Համալսարանի ղեկավարությունը որոշում է կտրուկ միջոցների դիմել: Նախ նա հայտարարում է, որ փակվում է բժշկական ֆակուլտետի առաջին կուրսը: Ապա՝ այդ ֆակուլտետի ուսանողներին առանձին-առանձին կանչում է գեկանատ և նրանցից պահանջում ստորագրություն, որ նրանք լսելու են Վարենկի դասախոսությունները:

Հակառակ այդ բոլորին՝ ուսանողները կրկնում են իրենց ցույցը, շվոցով նրան երկրորդ անգամ փախցնում: Ուսանողներից ժոխովը, իր քնկերների անունից հայտնում է Վարենկին, որ իրենք վճռականորեն հրաժարվում են նրա դասախոսությունները լսելուց:

Համալսարանի ղեկավարությունը դիմում է ավելի կտրուկ միջոցների՝ 17 ուսանողի, այդ թվում ժոխովին, հեռացնում է համալսարանից:

Վարենկը նույնպես վերջիվերջո հարկադրված է լինում հեռանալ համալսարանից:

Վարենկի պատմությունը մեծ արձագանք է գտնում ուսանողական խմբակներում, կազմակերպությունների մեջ: 1857 թվականից սկսած ուսանողական անլեգալ թերթերը Վարենկի պատմությունը դարձնում են քննարկման նյութ և լայն կերպով լուսարանում են:

1858 թվականին Մոսկվայի համալսարանի պատմա-ֆիլոլոգիական ֆակուլտետում համարյա միևնույն պատմությունը կրկնվում է պրոֆ. Մայկովի հետ, որը նույնպես ուսանողական հեղուկների հետեանքով հարկադրված եղավ թողնել համալսարանը:

Ուսանողական անլեգալ թերթերից մեկը՝ «Արձագանք»-ը (ЭХО) գրում է, որ ուսանողությունը պատրաստ էր Մայկովին դուրս նետելու լսարանից, եթե նրան ժամանակին չհեռացնեին:

Ուսանողության պահանջով իրավարանական ֆակուլտետից մտարվում է պրոֆ. Օրնատսկին, որ հայտնի էր իր ռեակցիոն հայացքներով:

Այսպիսով, 1857 թվականից սկսած մինչև 1861 թվականը, այսինքն՝ նախառեֆորմյան շրջանում, Մոսկվայի համալսարանի ուսանողությունը անմիջական մասնակցություն է ցուցաբերում երկրում կատարվող քաղաքական անցուղարձին:

Ուսանողության շրջանում գեո վառ էին Վ. Իելինսկու, Ա. Գերցենի, Ն. Օգարևի, Ն. Ստանկևիչի պայծառ անունները և նրանց գործերը: Ուսանողությունը երիտասարդական եռանդով հետևում էր Գերցենի «Колокол»-ին, Չերնիշևսկու պայքարին, առհասարակ ռեվոլյուցիոն-դեմոկրատական շարժմանը:

1857 թվականից սկսած ուսանողական տարրեր խմբեր և խմբակներ հրատարակում էին ձեռագիր, անլեզալ թերթեր, շարաթաթերթեր՝ քաղաքական, հասարակական բնույթ կրող:

Ուսանողական անլեզալ թերթերից հայտնի են «Искра», «Эхо», «Живой голос», «Звонок», «Последний звук» թերթերը:

Ուսանողներից ժոխտվր, որ «Искра»-ի ղեկավարն էր, թերթի բնաբան էր վերցրել Ա. Գերցենի «Колокол»-ի բնաբանը: Ուսանողական անլեզալ «Искра»-ն իր շոշափած խնդիրների, ուսանողական կյանքի սահմաններից դուրս գալու տենդենցներով տարբերվում էր ֆնացած խմբակներից և նրանց օրգաններից: Պրոֆ. Վարենկի գեմ սկսած պայքարը «Искра»-ն այսպես էր գնահատում.

«Միթե մենք միայն ինչ որ Վարենկի համար պիտի ստեղծենք այսպիսի պատմություն: Ըստ «Искра»-ի Վարենկի և նմանների գեմ պայքարելը ոչ թե այս կամ այն պրոֆեսորի՝ ռեակցիոն, տպետ, մեծամիտ մարդու գեմ կռիվ է նշանակում, այլ այսպիսի փաստերը պետք է առիթ գառնան հասարակական բնույթ կրող խնդիրների առաջադրման:

Մոսկվայի համալսարանի ուսանողությունը, այն էլ նրա ակտիվ և առաջավոր մասը, ուշագրություն դնում էր Չերնիշևսկու գործունեությանը, կարգում էր Գերցենի գրվածքները, օգտվում էր նրանց արտահայտած մտքերից, դադավարներից, մտքերի փոխանակություն նյութ դարձնում Ա. Գերցենի, Ն. Չերնիշևսկու արժարժամ քաղաքական և հասարակական տեսակետները:

Այդ շրջանում Մոսկվայի համալսարանի ուսանողության շարքերում գրական, հասարակական հարցերով զբաղվող խմբակները, որ ինքնադարձացման բնգհանուր անվան տակ էին առաջանում և գործում, ուսումնասիրում էին Մալեշովի, Սեն-Սիմոնի, Ֆուրիեի գրական աշխատասիրությունները:

Ուսանողական խմբակները տալիս էին երիտասարդ ուսանողին այն ամենը, ինչ նա չէր ստանում և ստանալ չէր կարող համալսարանի պրոֆեսորներից, եթե նույնիսկ այդ պրոֆեսորների շարքում կային հեղինակավոր և սիրված գիտնականներ:

Ինչ խոսք, որ ուսանողական այս շարժումը միատարր չէր: Կային և ռեակցիոն համոզմունքների տեր ուսանողական խմբակներ իրենց օրգաններով, որոնք պահանջում էին հնազանդություն և համակերպում ամեն մի կարգադրություն, կային և չափավոր պայքարի կողմնակիցներ, որոնք քարոզում էին զգուշություն, գեմ էին ակտիվ միջոցառումներին:

Կաղաքական և կուլտուրական այսպիսի միջնորոտում է, որ սովորում էին Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները 19-րդ դարի 50—60-ական թվականներին:

Հայ ուսանողներն իրենց կապերով, ամենօրյա կյանքով և շահերով չէին կարող կղզիացած կյանք վարել, անտարրեր գտնվել այն ամենի նկատմամբ, որ անմիջապես վերաբերվում էր ուսանողությանը, եթե նույնիսկ մի րոպե ուսանողական հարցերը առանձնացնենք բնգհանուր քաղաքական հարցերից:

Ճիշտ է, 1200 ուսանողների մեջ 30—40 հայ ուսանողներ, որ Մոսկվայի համալսարանի ուսանողության երեքից մինչև հորս տոկոսն էին:

կազմում, զգալի բան չէին կարող անել, սակայն նրանք խոշոր թիվ կարող էին համարվել հետաքննաց հայ իրականության համար, որի հետ կենդանի կապերով կապված էին և որտեղ աշխատելու էին համալսարանն ավարտելուց հետո:

Մոսկվայի համալսարանում սովորող հայ ուսանողները, հափշտակութամբ յուրացնում էին այն պրոգրեսիվ գիտությունը, որ տալիս էին ժամանակի մի շարք ականավոր պրոֆեսորներ:

Այդ շրջանի պրոֆեսորներից ամենատաղանդավոր և ուսանողության կողմից սիրված դասախոս էր Տիմոֆեյ Նիկոլաևիչ Գրանովսկին, որը 1839 թվականից սկսած մինչև իր մահը՝ 1855 թվականի աշնանը, վարում էր ընդհանուր պատմության ամբիոնը:

Տ. Ն. Գրանովսկին, որպես ուսուցիչ և հասարակական գործիչ, երկար տարիներ ընթացքում կապ էր հաստատել Ա. Ի. Գերցենի, Վ. Գ. Բելինսկու հետ, մասնակցել էր Ն. Վ. Ստանկևիչի խմբակին, չնայած նրան, որ նա չունէր սեփական-գեմինալիտական հայացքներ և մինչև իր մահը մնաց լիբերալ:

Տ. Ն. Գրանովսկու «չափավոր» հայացքները հայտնի էին և՛ Գերցենին, և՛ Չերնիշևսկուն, որոնք իրենց նամակներում, գրական գործերում, բոլոր դեպքերում էլ շատ բարձր էին գնահատում Մոսկվայի համալսարանի ընդհանուր պատմության պրոֆեսոր Տիմոֆեյ Նիկոլաևիչ Գրանովսկուն: Գրանովսկին արտոլյուտիզմի և ճորտատիրական կարգերի թշնամին էր և պայքարում էր նրանց դեմ: Նա իր քաղաքական գիծը վերին աստիճանի վարպետությամբ անց էր կացնում համալսարանում և հասարակության համար կարգացած դասախոսությունների ընթացքում: Գերցենը գրում է.

«Նրա լեզուն խիստ էր, արտակարգ լուրջ, ուժի, համարձակության նմուշ և պոեզիայով լեցուն, որ հիմնովին ցնցում էր լսողներին, արժնացնում նրանց»¹:

Տ. Ն. Գրանովսկին, լինելով Մոսկվայի համալսարանի ամենահեղինակավոր, ուսանողության սիրելի պրոֆեսորը, մեծ հետք է թողել նաև հայ ուսանողության վրա, նպաստել նրանց գաղափարական հասունացմանը:

Թե որքան մեծ է եղել Տ. Ն. Գրանովսկու գրական-հասարակական հայացքների ներգործությունը հայ առաջավոր երիտասարդության վրա, ցույց է տալիս Միքայել Նալբանդյանի «Հեգելը և նորա ժամանակը» փիլիսոփայական երկը, գրված 12—17 օգոստոսի 1863 թվականին, Պետրոպոլիովսկի բերդում:

Մ. Նալբանդյանն իր այս գրական աշխատասիրության մեջ լայն չափով օգտվում է Գրանովսկու գրական ժառանգության երկու հատորներից, մեջբերումներ անում, իր հայացքները հիմնավորելու համար գիմում Գրանովսկու հեղինակությունը:

Մ. Նալբանդյանը Գրանովսկու մահից 8 տարի հետո գրել է իր «Հեգելը և նորա ժամանակը» փիլիսոփայական երկը: Այդ տարիների ընթացքում թե ընդհանուր գրականությունը և թե ինքը՝ Մ. Նալբանդյանը շատ սկզբունքային հարցերում Գրանովսկուց առաջ էին անցել: Մենք Մ. Նալբանդյանի վերոհիշյալ աշխատասիրության մեջ տեսնում ենք քննական

¹ А. И. Герцен, Собр. соч., т. XIII, стр. 111.

վերաբերմունք գեպի Գրանտովսկու որոշ թեզերը, սակայն, բոլոր գեղարուստն էլ Մ. Նալբանդյանի համար Տ. Ն. Գրանտովսկին մնում է որպես հեղինակավոր տեսաբան և մեծ գիտնական:

Տեսնել է արդյոք և լսել է Գրանտովսկուն Միքայել Նալբանդյանը Մոսկվայում:

1856 թվականին լույս տեսան Գրանտովսկու գասախոսությունների և ուսումնասիրությունների երկու հատորները: Ռուսական մամուլը, առաջին հերթին «Современник»-ը, անմիջապես արձագանքեց դրան: Տ. Ն. Գրանտովսկու գերեզմանի շուրջը ամեն տարի հոկտեմբերի 4-ին, նրա մահվան տարեդարձին մեծ բազմություն էր հավաքվում, գլխավորապես ուսանողությունը:

Այս բոլորը տեղի էին ունենում այն տարիներին, երբ Միքայել Նալբանդյանը ապրում էր Մոսկվայում:

Միքայել Նալբանդյանը Գրանտովսկու գրական ժառանգությունն հետ ծանոթացել է, ավելի ճիշտ կլինի ասել, ուսումնասիրել է Մոսկվայում, արտասահման գնալուց չափ առաջ, այդ ոչ մի տարակույս չի առաջացնում: Գրանտովսկու գասախոսությունները Մ. Նալբանդյանը չէր կարող լսած լինել այն պատճառով, որ անվանի ռուս պրոֆեսորը վախճանվեց 1855 թվականին, երբ Մ. Նալբանդյանը մուտք չուներ Մոսկվայի համալսարանը:

Ենթադրաբար կարելի է ասել, թե գուցե Գրանտովսկու որոշ գասախոսություններին Մ. Նալբանդյանը ներկա է եղել:

Տ. Ն. Գրանտովսկին Մոսկվայի համալսարանում ուներ կողմնակիցներ, բնիկներ, վերջապես հետեւողներ: Եթե Գրանտովսկին լինելու միակը, որքան էլ նա տաղանդավոր գիտնականի և հասարակական գործչի անուն վաստակած լինել, նրա գործունեությունը կլինել սահմանափակ: Գրանտովսկին մի ամբողջ հոսանքի պարագլուխն էր, անկախ նրանից, թե նա ինչ չափով կարողացել է այդ հոսանքին տալ որոշ կազմակերպչական բնույթ: Տ. Ն. Գրանտովսկու աշակերտների, այսինքն՝ նրա հայացքների, պատմական կոնցեպցիայի կողմնակիցների թվին են պատկանում Պ. Ն. Կուզրյավցևը, Ս. Մ. Սոլովյովը, Բ. Ն. Չիչերինը, Ի. Կ. Բարսուը, Վ. Ի. Գերշեն, Ֆ. Ի. Բուսլակը և ուրիշները: Թվարկած ռուս գիտնականները Մոսկվայի համալսարանի պրոֆեսորական կազմի աչքի բնկնող գործիչներից էին, որոնցից մի քանիսը, ինչպես, օրինակի համար, Ս. Մ. Սոլովյովը կամ Բ. Ն. Չիչերինը մեծ հոգակ հանեցին իրենց պատմագիտական աշխատություններով:

Մենք թվարկեցինք Մոսկվայի համալսարանի պրոֆեսորական կազմի լավագույն գիտնականների անունները, որոնք անցյալ դարի 50—60-ական թվականներին գիտություն տարբեր բնագավառներում մեծ հաջողություններ ձեռք բերեցին, իրենց աշակերտներին գինեցին գիտությունը, պայքարեցին քարացած, սխալաստիկ մտքի դեմ:

* * *

1850—51 ուսումնական տարվա բնիկացրում Մոսկվայի համալսարան-

¹ Ն. Գ. Չերնիշևսկին ոգջունում էր այն փաստը, որ Բ. Ն. Չիչերինը, Վ. Ն. Կուզրյավցևը իրենց աշխատությունները նվիրում էին Տ. Ն. Գրանտովսկու հիշատակին:

նում սովորել են 16 հայ ուսանողներ, որոնցից 10-ը՝ բժշկական ֆակուլտետում: Պատմա-լեզվաբանական ֆակուլտետում համեմատաբար քիչ թվով հայ ուսանողներ են սովորել: Այդ ֆակուլտետում 12 տարվա բնթացքում՝ 1850—1862 թթ. չորս տարի եղել է մի-մի հայ ուսանող, իսկ 8 տարի՝ ոչ մի հայ:

Վերոհիշյալ տարիների բնթացքում հայ ուսանողության կեսից ավելին բնագունվել է և սովորել բժշկական ֆակուլտետը, 1855 թվականից սկսած մինչև 1862 թվականը բժշկական ֆակուլտետի հայազգի ուսանողների թիվը մնում է համարյա անփոփոխ՝ մոտ 20, մինչդեռ հայ ուսանողության քանակը ամեն տարի աստիճանաբար աճում էր: Այդ աճը տեղի էր ունենում առաջին հերթին իրավաբանական ֆակուլտետի ուսանողների հաշվին: Այսպես, օրինակ, եթե իրավաբանական ֆակուլտետում 1850—51 ուսումնական տարում հինգ հայ երիտասարդ կար, 1861—62 ուսումնական տարում նրանց թիվը հասնում է 17-ի: Իրավաբանական ֆակուլտետի հայ ուսանողների թիվը հասնում էր արդեն բժշկական ֆակուլտետի ուսանողների քանակին:

Մեր նշած շրջանի սկզբնական տարիները ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետում մեկ կամ երկու հայ երիտասարդ կար, իսկ 1860—61 ուսումնական տարում՝ արդեն 12:

Մեր ձեռքի տակ է գտնվում հայ ուսանողների անձնացուցակը, որը կազմել ենք Մոսկվայի համալսարանի արխիվի նյութերի հիման վրա: Այդ անձնացուցակից երևում է, որ հայկական դպրոցներից ներսիսյան, Նրեանի թեմական, Շուշու թեմական, Սալիսյան ուսումնարանները, ինչպես և հետագայում Նոր-Նախիջևանի թեմական դպրոցը, Մոսկվայի համալսարանին ուսանողներ չեն տվել: Մինչդեռ Թիֆլիսի գիմնազիան, որոշ պանսիոններ, Լադարյան ճեմարանը գլխավոր մատակարարողներն են եղել Մոսկվայի համալսարանի համար:

Մենք մոռացության չենք տալիս այն հանգամանքը, որ 19-րդ դարի վերջերում նշած սահմանափակումը հայկական դպրոցների համար ուժի մեջ էր մինչև 1917 թվականը: Այդ սահմանափակման համաձայն հայկական միջնակարգ կրթությունն ունեցող երիտասարդը Ռուսաստանի համալսարան բնագունվելու իրավունքից զուրկ էր:

Սակայն այդ սահմանափակումը գոյություն չունեւր անցյալ դարի 50—60-ական թվականներին:

Նշանակալից է Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության բնդհանուր քանակի աճը տարեց տարի՝ 1850-ից մինչև 1862 թվականը:

1861—62 ուսումնական տարում Մոսկվայի համալսարանի բոլոր ֆակուլտետներում կար 46 հայ ուսանող: Դա արդեն մեծ և նշանակալից երևույթ էր, որը իր արժանի գերը պիտի կատարեր հայ-ռուսական կուլտուրական կապերի պատմության մեջ և կատարել է: Այդ փոթորկալից տարիներին ուսանողության շարքերում շուրջ 50 հայ ուսանողներ քաղաքական հասունություն են ձեռք բերել՝ անբնդհատ մասնակցելով բնդհանուր և հայկական ուսանողական շարժմանը:

Այն միևնույն րո, որ ստեղծվել էր Մոսկվայի համալսարանի ուսանողության համար, իր բարենպաստ անդրադարձումն ունեցավ հայ ուսա-

նոյնների վրա: Ռեույսուցիոն-գեմսիրատական շարժումը ցնցեց և հայ երիտասարդությանը:

1850—1862 թվականներին Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների թիվը եղել է ամիսի, քան համալսարան ամբարտոյններինը: Ճիշտ է, այս հանգամանքը միայն հայկական բնույթ չի կրել, այս երևույթը մենք նկատել ենք նաև սուսների մեջ, սակայն մեր խոսքը հայերին է վերաբերում: Պրա համար եղել են մի շարք պատճառներ, որոնցից նշենք երկուսը, մեկը ուսանողների նյութական անապահովություն, չքավորություն հասնող վիճակն էր, մյուսը՝ Մոսկվայի սառը կլիման:

Հայ երիտասարդությունը Մոսկվա էր գալիս հարավից՝ Հայաստանից, Անդրկովկասից, Ռուսաստանի հայաբնակ վայրերից: Մոսկվայի ցուրտ ձմեռները, սառնամանիքները, տարվա 8—9 ամսվա անարև, թխապատ օրերը, անուշի, հագուստի պահպանության, կենցաղային անհարմար պայմաններում բացասաբար էին ազդում երիտասարդների առողջության վրա: Հիվանդություններից թոքախտն էր երիտասարդության ամենատանգավոր թշնամին: Դանիֆ-քանի տաղանդավոր, շնորհալի հայ երիտասարդ ուսանողներ գետ չբացված՝ թառամեցին: Իսկ ջրանիսը թոքախտ ստանալով, թողեցին ուսումը, վերադարձան հայրենիք և այնտեղ երիտասարդ հասակում վախճանվեցին:

* * *

Այժմ կանգ առնենք հայ հասարակական-գրական կյանքում Մոսկվայի համալսարանի հայ ուսանողությունը կատարած դերի վրա:

Երեք գլխավոր ուղղություններ է դարձացել հայ ուսանողությունը հասարակական աշխատանքը Մոսկվայի համալսարանում և նրա շրջանակից դուրս:

1. Ճեմանոցական ժողով՝ կամ հայրենակցական միություն, որը գերազանցապես զբաղվում էր գրական-հասարակական հարցերի կազմակերպմամբ և չքավոր հայ ուսանողներին օգնելու գործով, Ճեմանոցական ժողովին նյութական բազան հայերեն լեզվով ներկայացուցանելից գոյացած գումարներն էին:

2. Հայ ուսանողների մասնակցությունը կուլտուր-լուսավորական-գրական աշխատանքին՝ «Հյուսիսսովայի» էջերում և այլ հրատարակություններում:

3. Հայ ուսանողների մասնակցությունը հայ թատրոնի կազմակերպմանը, հայ ինքնուրույն գրամատուրգիայի ստեղծմանը:

Նման մի հոգիածում անհնար է սպառնչ կերպով շարադրել այս երեք ուղղություններով՝ Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների կատարած աշխատանքը: Ուստի մենք համառոտակի կանդ կառնենք Մոսկվայի համալսարանի հայ ուսանողությունը գրական-հրատարակատեսական և թատերական գործունեության վրա, այլ խոսքով՝ կիրթնենք ցույց տալ այդ ուսանողների մասնակցությունը «Հյուսիսսովայի» ստեղծած կուլտուր-լուսավորական շարժմանը և Մոսկվայում կազմակերպված հայկական թատրոնին:

Մ. Նալբանդյանից հետո Մոսկվայի համալսարանի ուսանողներից առաջինը Հարություն Համասիյանն է, որ հանդես է գալիս «Հյուսիսա-

փայլում» 1858 թ. վեցերորդ տետրակում, հրատարակելով «Կին սարգուլարոյական կողմը» ակնարկը: Նա այդ ակնարկում գրում էր. «Կին մարդը տալիս է մեզ առաջին դաստիարակությունը, որ անդգալի կերպով հաստատվելով և գտնալով բնավորության հիմք, տալիս է բարոյական ուղղություն բոլոր կյանքի համար»:

«Հյուսիսսփայլի» հաջորդ երեք համարներում Հարություն Համասփյուռը տպագրում է մի ընդարձակ աշխատություն «Դաստիարակություն» վերնագրով: Հ. Համասփյուռի աշխատությունը ցույց է տալիս, որ հեղինակը օանոթ է իր ժամանակի ուսուսումնական և օտարազգի մանկավարժների, դաստիարակչության հարցերով դրադովող տեսարանների գործերին, օգտվել է նրանց հայադասերից և ցանկացել է տալ մի ամփոփ ակնարկ դաստիարակության խնդիրներ շոշափող, հիմնականում լիբերալ մեկնարանություններով:

«Հյուսիսսփայլի» առաջին տարվա ընթացքում Լուանդուն կերպով գործել է Հ. Համասփյուռը: Նրա տպագրած գործերը ցույց են տալիս, որ նա ունեցել է գրական վարժ լեզու, հղկված ոճ, տիրապետել է իր արժարժած նյութին:

Հարություն Համասփյուռը թարգմանել է ուսերենից «Նոր Անտիգոնա» գրվածքը:

Մոսկվայի համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետի հայ ուսանողներից հարկավոր է նշել Ստեփանոս Ստեփանյանին, որը «Մեղու Հայաստանի» թերթի 1859 թվականի № 10-ի մեջ տպագրում է իր «Թըղթակցություն Մոսկվայից» հոգվածը: Այդ հոգվածում Ստ. Ստեփանյանը նկարագրել է Մոսկվայի հայ ուսանողների կողմից կազմակերպված ներկայացումը:

Ստեփանոս Ստեփանյանը անձամբ մասնակցել է այդ ներկայացման կազմակերպմանը: Նա 1859 թվականի հունվարի 27-ին, ներկայացման երկուշյան արտասանում է իր մի րանաստեղծությունը: Երանդուն մասնակցել է ուսանողական թատրոնին, ինչպես և գրական, հասարակական կյանքին:

Նա աշխատակցել է նաև «Հյուսիսսփայլին»:

Ստեփանյանը (Խորեն Ստեփանեն) հետագայում, սակայն, աստիճանաբար դրսևորում է իր պահպանողական հայացքները և գտնում հայ կղերա-պահպանողական հոսանքի պարագլուխներից մեկը:

«Հյուսիսսփայլի» աշխատակիցներից է եղել Մոսկվայի համալսարանի թժշկական ֆակուլտետի ուսանողներից Հովհ. Բերբերյանը, որը «Հյուսիսսփայլում» տպել է Ն. Կարամզինի «Бедная Лиза» պատմվածքի իր թարգմանությունը, կազմել է աշխարհարար «այրերնարան»:

Մոսկվայի համալսարանի ուսանողներից Միքայել Միանսարյանն իր գրական-հասարակական գործունեությունը սկսում է «Հյուսիսսփայլում» 1860—61 թվականներին: Մ. Միանսարյանի գրական գործերից ուշագրություն արժանի է «Քնար հայկական» հայերեն երգերի ժողովածուն, որը կազմելու համար հրատարակիչը երկար ժամանակ ուսումնասիրել է նյութը, ընտրություն կատարել:

Միքայել Միանսարյանի «Քնար հայկական» ժողովածուն նշանավոր է նաև այն տեսակետից, որ գրքի կազմողն ու հրատարակիչը, չնայած իր

լիրերայ հայաքաներին, առաջինն է, որ իր երգարանի մեջ տեղավորում է Միքայել Նալբանդյանի 12 բանաստեղծությունները, որոնց թվումն է «Աղատն աստվածք»։ Մ. Միսնասարյանը իր գրքում տալիս է մեծ սեղյուցիոն-գեմոկրատի կենսագրական և նրա գրական գործերի բիրյիտգրաֆիան։

Այսպիսով, «Հյուսիսսովայի» հրատարակման տարիներին Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության եռանդուն գործիչներից Մ. Նալբանդյանը, Անանիա Սուլթանշահը, Հարություն Համասիյուրը, Գաորիկ Տեր-Հովհաննիսյանը (Քաջերունին), Հովհաննես Բերբերյանը և ուրիշները մասնակցել են ամսագրին, որպես երիտասարդ հեղինակներ։

Այժմ մի քիչ ավելի հանգամանորեն ծանոթանանք Մոսկվայի համալսարանի այն հայ ուսանողների գործունեությանը, որոնք հայ հասարակական կյանքում, հայ նոր գրականության, թատրոնի ստեղծման գործում կատարել են որոշակի գեր, և որոնց մեծ մասը անմիջապես կապված են եղել «Սովրեմեննիկի» հետ, տարված են եղել ուսու փաթսունականների առաջավոր գաղափարներով։

Այդ ուսանողներից ամենանշանավորը Մ. Նալբանդյանն է, որը եղել է 60-ական թվականների հայ ամենապրոգրեսիվ մտքի կրողը, և իր գրական-հրապարակախոսական երկերով ու քաղաքական սեղյուցիոն գործունեությամբ բացառիկ գեմք է 19-րդ դարի կեսերին։

Նալբանդյանը, իր շուրջը համախմբելով Մոսկվայի համալսարանի առաջավոր հայ ուսանողներին՝ Գ. Տեր-Հովհաննիսյան, Ա. Սուլթանշահ, Հ. Բերբերյան և ուրիշներ, «Հյուսիսսովայի» էջերում սկիզբ դրեց հայ քննադատական սեպիդմին, տալով այդպիսի սեպիստական փայլ առաջին օրինակը իր «Մեռելահարցուկով», գեմոկրատական առաջավոր գրաքննադատություն ու հրապարակախոսությունը, որի ամենամիայլուն նմուշները հայ իրականության մեջ մնում են նրա «Հիշատակարանները»։

Նալբանդյանը, հետեելով «Սովրեմեննիկի» տրագիցիաներին, «Հյուսիսսովայում» սկիզբ դրեց նաև գեմոկրատական քաղաքական պոեզիային՝ նեկրասովյան աղատարադ շունչը հաղորդելով «Հյուսիսսովայի» ընթերցողներին թե թարգմանական և թե ինքնուրույն ոտանավորներով։

Առանձին աշխատության նյութ է Մ. Նալբանդյանի գերի վերհանումը հասարակական կյանքում։ Մեր նպատակն է ծանոթացնել Մոսկվայի համալսարանի հայ ուսանողներին ընդհանուր գծերով, ուսանողներ, որոնց մեծ մասի գրական և հասարակական գործունեության վրա նկատելի է Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը։

*

Մ. Նալբանդյանն է, որ մոտիկից օժանդակել, «Հյուսիսսովայի» հետ է կապել մի շարք հայ ուսանողների, ուղղություն տվել նրանց գրական և հասարակական գործունեության, քաջալերել նրանց առաջին հաջողությունները։ Նման երիտասարդներից է եղել Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսանող, 23-ամյա Գ. Տեր-Հովհաննիսյանը, որը Նալբանդյանի անմիջական օժանդակությամբ ու խորհուրդներով գրեց իր հայանի «Տեր Սարգիս» փեպր, և փորձեց տպագրել «Հյուսիսսովայում», բայց մնաց անավարտ։

Նալբանդյանի Վերիտիկա Սոս և Վարդիթերձ աշխատությունյան մեջ մենք կարդում ենք.

«... արդարությունը նույնպես պարտք է դնում մեր վերաբարձրաբարրառ հոգակել պ. Բարրիկեյ Տեր-Հովհաննիսյանցի «Տեր-Սարգիս» մակագրով վիպագրությունը, որ տպվում էր 1861 թվականի «Հյուսիսամիայի» մեջ, և որ ամսոս՝ հազար ամսոս, հեղինակից կամ «Հյուսիսամիայի» կախում չունեցող պատճառներով բնդհատվեցավ... Եթե երբ և լինի այդ կիսատ ստացած գործը տպարտվի, միևնույն հոգով և հմտությամբ շարունակվելով, այն ժամանակ մեր նոր դպրություն մեջ այդ գործն այն տեղը կունենա, ինչ տեղ ունի դպրություն մեջ ստացել է «Մեռած անձինքը»:

Այս տողերից երկու էջ հետո Մ. Նալբանդյանը նորից է վերագրում նույն Գարրիկեյ Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» վիպակին՝ այսպիսի խոսքերով.

«Պ. Բ. Տեր-Հովհաննիսյանցի «Տեր Սարգիս» գործում, մի հոյակապ արժանատիություններն էլ այն է, որ նա բացի մի քանի անհրաժեշտ պատմական ծանոթություններից և արտաքին նկարագրություններից իր ներգործողների հոգեբանական կամ բարոյական որակները մասին բնավ իր բերնից խոսելով հանգես չի դալիս. ներգործողքը իրենց խոսքերով կամ գործերով ցույց են տալիս մեզ իրենց ով և ինչ լինելը»:

Բարրիկեյ Տեր-Հովհաննիսյանը երկար տարիներ աշխատում էր որպես գալատական բժիշկ Երևանյան հասանդում: Գեղարվեստական գրականությունը բնագավառում Գ. Տեր-Հովհաննիսյանը նշանակալից գործեր չթողեց: Նա վախճանից ավելի ակնարկներ, հուշեր և հայկական ժողովրդական բանաստեղծյան վերաբերյալ գրական գործեր տպագրեց հայկական պարբերական մամուլում «Դաջրերունի» ստորագրությամբ:

«Սովրեմեննիկի» գերբ Մոսկվայի հայ ուսանողությունը կյանքում շատ մեծ է եղել: Ն. Գ. Զերնիշևսկու և նրա խմբագրած ամսագրի բարերար ազդեցությունը անցյալ դարի 50—60-ական թվականների Մոսկվայի համալսարանում կրթություն ստացող հայ ուսանողության վրա կարելի է ցույց տալ բազմաթիվ փաստերով:

Նման փաստերից է Անանիա Սուլիմանյանի «Հայոց ազգի լուսավորիչք» պիեսի հանգես դալը, պիես, որը տպագրվեց «Հյուսիսամիայի» 1859 թվականի տասներորդ համարում:

Անանիա Սուլիմանյանը իր 1859 թվականի սեպտեմբերի 27-ի իր դիմումում «Հյուսիսամիայի» խմբագրին գրում է.

«Յուր պատվելի եղբոր Միքայել Ղազարյան Նալբանդյանին սիրող և մեծարող սրտի անխաղախ հովեր»:

Ա. Սուլիմանյանը, «Հայոց ազգի լուսավորիչք» պիեսից բացի, ուրիշ գրական, գրամատիկական գործեր չի հրատարակել: Բսկ այս պիեսի վրա աշխատելիս, նա ունեցել է խորհրդատու Միքայել Նալբանդյանին: Կասկածից դուրս է այն ենթադրությունը, թե Միքայել Նալբանդյանը եռանդուն կերպով աջակցել է Անանիա Սուլիմանյանին «Հայոց ազգի լուսավորիչք» գրելիս:

Հայտնի է, որ Անանիա Սուլիմանյանի «Հայոց ազգի լուսավորիչք» պիեսը տպագրություն հանձնելուց ուղիղ մի տարի առաջ Պետերբուրգում

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Երևան, 1910, էջ 120:

«Современник»-ի 1858 թվականի խնդիրը համարում լույս տեսավ Ս. Ֆեոդորովի «Դաստիարակիչները» (Воспитатели) պիեսը Անանիա Սուլթանշահի գրամատիկական երկը Ս. Ֆեոդորովի պիեսի փոխադրությունն էր։

Անանիա Սուլթանշահը Ս. Ֆեոդորովի պիեսը թարգմանելիս, մեղադարձում հարադատ հեղինակի արտահայտած գաղափարներին, առանձին կեղծարարների բնութագրությունը, ամբողջովին հայացքել է այն, բոլոր էություն, տալով մի խնդիրային ստեղծագործություն։

Ծանոթանալով այդ երկու պիեսների նմանություններին ու տարբերություններին՝ բնականորեն գծերով։

Վերջնական Անանիա Սուլթանշահի պիեսի գործող անձանց բնութագրեր։

Դիմալիսկյանց փարզապետ, Սա. Ս. Ֆեոդորովի Կորիլյանտիկովն է, որը սուս հեղինակի մոտ գործող տեսուչն է և հագեցրած է։

Անանիա Սուլթանշահը իր պիեսի գլխավոր հերոսին առանց քաղաքիկում անվանում է փարզապետ և պարզ կերպով ակնարկում է, որ դա թեև դասիայի թաղիպան ու սուսմարանի տեսուչ Գարրիկ Վարդապետ Այվազովսկին է։

Հարություն աղա Պապալիյան, Ս. Ֆեոդորովի պիեսի մեջ այդպիսի գործող անձ չկա, սա «Հայոց ազգի լուսավորիչքը» հեղինակի ստեղծագործությունն արդյունքն է Այս կերպարը իր լեզվական տվյալներով, սճով և բոլոր հատկություններով Հարություն աղա թաղիպանն է, Միքայել Նալբանդյանի սխերիմ թշնամին, ազգի «բարեբարք», թաղիպան ու սուսմարանի հագարարձան։

Գրիգոր Սաղամյանց, թեկնածու լեզվագիտություն, հյուր այս քաղաքում։

Հովհաննես Խալաթյանց, գլխավոր փրակազու փորձարանին։

Այս երկու երկրորդական գերերը նույնպես չկան սուսերեն բնագրի մեջ։

«Հայոց ազգի լուսավորիչքը» երկի հեղինակը Ս. Ֆեոդորովի պիեսը թարգմանելիս և փոխադրելիս, բաց է թողել երեք գործող անձ։

Ն. Պ. Սկուլիստով — կուլեմսկի սովետանիկ

Պ. Ի. Կրուպնիկով — ստատսկի սովետանիկ

Ռ. Յա. Բալարաշկին — գնդապետ

Երեքն էլ եղել են Կորիլյանտիկովի նախկին աշակերտները։

Ըստ Ս. Ֆեոդորովի, այդ երեք գործիչները, որ պետական ծառայություն մեջ հասել են հաջողությունների, պիեսի ցույց տալին Կորիլյանտիկովի դաստիարակություն հաջող ու փտահելի մեթոդները։

Այս երեքը Անանիա Սուլթանշահի համար ավելորդ էին։ Նա իր առաջ հետևյալ խնդիրն էր դրել, գույց տալ Գարրիկ Վ. Այվազովսկու, Հարություն աղա թաղիպանի և Նրանց նման մարդկանց հակամանկավորժան, հակադիտական, հակադեմոկրատական հայացքներն ու կրթական գործունեությունը։

«Հայոց ազգի լուսավորիչքը» պիեսի մեջ դուրս են բերված հորս սուսուցիչներ։

Տրդատյանց — հայկաբան

Արամենց Գեորգ — պատմաբան

Հակորյանց — բնաբան

Հովսեփյանց — աշխարհագետ

Վերոհիշյալ չորս վարժապետներից առաջին երկուսը վերցված են Ս. Ֆեոդորովի պիեսից, իսկ երրորդ և չորրորդ վարժապետները հայագրի հեղինակի ստեղծագործությունն են:

Մնացած գործող անձանց բնութագրություն մեջ առանձնապես փոփոխություն չեն մտցրել:

Որպես դրամատուրգիական գործ Սուլիանշանի պիեսը, առանձին արժանիքներ չունի: Մոսկվայում հայերեն լեզվով ձևալույս ազգի լուսավորչությամբ պիեսի բեմադրությունը, սակայն, ցույց է տալիս, որ այդ դրական գործի հասարակական-քաղաքական նշանակությունը եղել է մեծ, նրա մեջ արտահայտված դադափարների պատճառով:

* * *

Անցյալ դարի հիսունական թվականների վերջերին՝ Մոսկվայի հայ ուսանողությունից հասարակական գործունեությունից առաջնորդներից մեկը եղավ հայկական թատրոնի կազմակերպման գլխավորն հարցը:

Հայկական բեմ ստեղծելու հարցը ծագել է այդ շրջանից 30 տարի առաջ, երբ Սարգիս Տիգրանյանը, Թեոդորոս Սաղամյանը իրենց բնկերների հետ միասին մասնակցելով Մոսկվայի համալսարանի ուսանողական թատրոնի աշխատանքներին, երազել էին ունենալ իրենց հայկական թատրոն: Հետագայում այդ երկու երիտասարդները Թ. Սաղամյանը և Ս. Տիգրանյանը համալսարանը ավարտելուց հետո սկսում են մանկավարժական աշխատանքը Նոր-Նախիջևանի հայաբնակ քաղաքում:

Պատանի Սիբայել Նալբանդյանի հիշողություն մեջ վառ մնացած պատճ է լինելին Թ. Սաղամյանի և Ս. Տիգրանյանի Նոր-Նախիջևանում կազմակերպված հայերեն լեզվով ներկայացումների տպավորությունները:

25—27 տարի անց՝ Մոսկվայի համալսարանի հայ ուսանողությունից հաջորդ սերունդը սկսեց հայկական թատրոնի գործնական աշխատանքը, ստեղծեց դրամատուրգիական գործեր և տվեց մի քանի հայ դրամատուրգներ, կազմակերպեց հայերեն լեզվով ներկայացումներ, տարիներ շարունակ պահեց, վարդապետեց իր ուժերով հայկական թատրոնը Մոսկվայում:

Մոսկվայի հայկական թատրոնի մասին գրվել են բնդհանուր տողեր միայն, մինչդեռ այն նշանավորում է հայ թատերական արվեստի դարգացման մի ուրույն շրջանը: Նա ունեցել է իր պատմական, նշանակալից դերը մեր ժողովրդի կուլտուրայի զարգացման առաջնորդում և զբաղում էլ արժանի է հատուկ ուսումնասիրություն:

Այդ թատրոնի սկզբնավորումը անխզելիորեն կապվում է Սիբայել Նալբանդյանի անվան հետ ոչ միայն որպես առաջին ներկայացման ֆահաստող և ուղի նշող, այլև որպես այդ առաջին բեմադրության կազմակերպողներից մեկը:

Սիբայել Նալբանդյանի «Հյուսիսափայլ» համարներում տպագրված «Հիշատակարանում» Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների կազմակերպված ներկայացմանը նվիրված էջերը հանրածանոթ են բալորին:

Առաջին ներկայացման համար հայկական պիես ընտրելիս Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները կանգնած էին անհաղթահարելի արգելքների առաջ: Ուսանողներից Ն. Փուղինյանը հարկադրված է լինում վերամշակել Ս. Վանանդեցու «Արիստակես» պատմական ողբերգությունը և բեմ հանել:

Նալրանդյանը «Հյուսիսամայլում» քննադատում է այդ պիեսը:

«Առհասարակ շատ թույլ բան է և զուրկ ամենայն բանաստեղծական ճարտարությունից. ասես թե դուրս հեղինակը հարկադրանքով գրել է այդ գործը: Նա ամենայն տեղ, ամենայն բոլոր զանազան ազդասիրական խոսքերով աշխատում է վարագուրել դրամատիկական գործողության պակասությունը և չքավորությունը»:

Միքայել Նալրանդյանի այս դիպուկ խոսքերը վերաբերում են բոլոր այդ շրջանում գրված, երբեմն բեմադրված, երբեմն նույնիսկ տպագրված «հայրենասիրական», «պատմական» պիեսներին՝ «Արշակ երկրորդ», «Պապ թագավոր», «Սամվել», «Շուշանիկ», «Ավարայրի արծիվը» և այլն:

Մեծ ուղղուցիտն-դեմոկրատը իր գրական ելույթներով ուսանող երիտասարդներ մղում էր դեպի ժամանակակից հրատապ հարցեր շոշափող դրամատուրգիան: Այդ է վկայում Նալրանդյանի քաջակրական վերաբերմունքը Մոսկվայի համալսարանի մի հայ ուսանողի՝ Ալադաթյանի նկատմամբ, որը փորձել էր գրել ինքնուրույն մի գործ՝ «Վայ իմ կորած հիսուն տակ» անունով՝ Թիֆլիսի կյանքից: Նալրանդյանը խրախուսելով նրան գրում է. «Պ. Ալադաթյանի գործը բավական կենդանություն և ունի հայկական բնավորություններին: Շնորհակալություն դուրս հեղինակին»:

Միքայել Նալրանդյանի ելույթը ծրագրային նշանակություն ունեցավ Մոսկվայի հայկական թատրոնի համար: Այդ է վկայում այն փաստը, որ տարիներ շարունակ Մոսկվայում գործող հայկական թատրոնի ղեկավարի մեջ հաղթահարող դեպքերում բեմադրվեցին «պատմական», «հայրենասիրական» պիեսներ: Տարեկան առնվազն մեկ, երբեմն երկու և նույնիսկ ավելի բեմադրություն կազմակերպող Մոսկվայի հայ ուսանողները տասից ավելի տարի շարունակ բեմադրել են հատկապես ժամանակակից հարցեր շոշափող պիեսներ:

Ասացինք, որ Մոսկվայի հայկական, ուսանողական թատրոնին զաղափարական ուղղություն տվողը և խթանողը եղել է մեծ ուղղուցիտն-դեմոկրատ Միքայել Նալրանդյանը: Կանգ առնենք նաև մի փաստի վրա, որը ուղղորդության չի արժանացել մինչև այժմ:

Միքայել Նալրանդյանը «Հյուսիսամայլում» 1859 թվականի առաջին համարի մեջ իր հիշատակարանում գրում է.

«Եղերեղություն մեջ, հայոց դուրքը, պարսից պատերազմից հետ դառնալով, երգեց գիտնական Թեոդորոս Եսայան Սաղամյանցի «Խնդա աշտօր Հայաստան» երգը, որ մի ժամանակ երգված էր Նոր-Նախիջևանում, մինչդեռ քաղաքական վարժապետն ու պ. Սիգրանյանցը քանի անգամ պատճառ տվեցին հայերին, մի բան տեսնելու կամ լսելու թատրոնական բեմից մայրենի լեզվով»:

Միքայել Նալրանդյանի այս տողերում նշած տվյալների մեջ մեզ հետաքրքրում է մի հարց. ինչպես և ինչ ճանապարհներով Թեոդորոս Սա-

¹ Ս. Նալրանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 381:

դամյանի Վենդա այսօր Հայաստանն ևրգի տեքստը հասել է Մոսկվա և օգտագործվել Վերիստակեսս ողբերգության մեջ:

Վերիստակեսս ողբերգության բեմադրությունից մոտավորապես մի տարի առաջ Պետերբուրգում հրատարակվեց Ռափայել Պատկանյանի կադմած Վզգային ևրգարան հայոց գիրքը, որի 81-րդ էջում տպագրված էր Վենդա այսօր Հայաստանն ևրգը: Ոչ մի տեղ Ռափայել Պատկանյանը չի նշում, թե այդ ևրգի հեղինակն ով է:

Անշուշտ, Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների, այդ թվում Մ. Նալբանդյանի ձեռքի տակ եղել է Վզգային ևրգարանը, սակայն Մոսկվայի հայկական ներկայացում կազմակերպող հայ ուսանողները զփարթե իմանային Վենդա այսօր Հայաստանն ևրգի հեղինակի ազգանունը: Այդ որոշակիորեն գիտեր միայն Միքայել Նալբանդյանը, որը ծանոթ էր և Թ. Սաղամյանի և Ս. Տիգրանյանի հետ: Նա գիտեր ևրգի և՛ բովանդակությունը, և՛ եղանակը:

Վերիստակեսս ողբերգության մասնակցող հայ ուսանողների մեջ կային թիֆլիսեցիներ, հաշտրախանցիներ, ղզլարցիներ, կային նաև նորնախիջևանցիներ: Նոր-Նախիջևանցի ուսանողներից միայն Մ. Նալբանդյանն էր, որ Թ. Սաղամյանի և Ս. Տիգրանյանի կազմակերպած ներկայացումները տեսել էր, քանի որ Սարգիս Տիգրանյանը 1841 թվականից մեկնել էր Սիմֆերոպոլ ուսուցչություն պաշտոնով:

Ո՛վ էր այդ ևրգն առաջարկել ուսանողներին, որ նրանք օգտագործեն բեմադրության ժամանակ: Ամենայն հավանականությամբ Միքայել Նալբանդյանը, որը իր ժամանակ տեսել էր Նոր-Նախիջևանի հայկական ներկայացումները և հիշողության մեջ մնացել էր Թ. Սաղամյանի ևրգը:

Հետևաբար, անհավանական չպետք է թվա, որ Մոսկվայի հայ ուսանողության կողմից կազմակերպված հայկական թատրոնի առաջին բեմադրության ոգեշնչողը, խորհրդատուն, գուցե և կազմակերպիչը եղել է Միքայել Նալբանդյանը:

Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների կողմից կազմակերպված հայերեն ներկայացումները շարունակվեցին մոտ տասը տարի, որոշ ընդհատումներով:

Հայտնի է, որ հայ ուսանողների առաջին բեմադրությունը անմիջապես արձագանք գտավ այն ժամանակվա մամուլում՝ Վշուսիսսափայլում, «Մեղու Հայաստանի» և «Ճոռաքաղ» պարբերականներում: Սուր պայքար սկսվեց այդ խնդրի շուրջը: Ոգեորված Մոսկվայի համալսարանի հայ ուսանողությունը բեմական հաջողություններով, կադարյան ճեմարանի աշակերտությունը նույնպես ճեմարանի սրահներից մեկում սկսեց ներկայացումներ կազմակերպել աշակերտության համար:

Հայերեն և ռուսերեն լեզուներով արվող այդ ներկայացումները մինչև 1861 թվականը փակ բնույթ ունեին, կազմակերպվում էին միայն աշակերտության համար: Հետագայում, երբ կադարյան ճեմարան եկավ Մոսկվայի համալսարան ավարտած Դեորգ Քանանյանը, ճեմարանի աշակերտական ներկայացումները դարձան ավելի կանոնավոր՝ հասարակության համար: Ներկայացումները երբեմն տրվում էին ճեմարանի և համալսարանի ուսանողության միացյալ ուժերով:

Հաղարյան ճեմարանի ավագ դասարանի աշակերտներից նրանք, ովքեր հետագայում ընդունվում էին Մոսկվայի համալսարանը, շարունակում էին իրենց սկսած գործը՝ մասնակցում ուսանողական, հայկական ներկայացուցիչներին:

Այսպիսով, Մոսկվայում, որտեղ գոյություն ունեւ ծնայուն հայկական գաղութ՝ իր միջնակարգ դպրոցով, հայկական տպարանով, պարբերական մամուլով, հայ ուսանողությամբ, առաջացավ հայկական թատրոն, որը պարբերաբար, տարիներ շարունակ, պահպանեց իր գոյությունը: Հետագայում, անհրաժեշտ դարձավ մասնավոր տներից և Հաղարյան ճեմարանի շենքից դուրս գալ և բեմադրությունները կազմակերպել քաղաքի թատրոններում: Այդպիսի թատրոններից մեկն էր Սեկրետարյովի մասնավոր թատրոնը, որտեղ պարբերաբար հայերեն լեզվով բեմադրություններ էր կազմակերպում ուսանողական ընկերությունը:

Մոսկվայում շուրջ տասը տարի գործող հայկական թատրոնը պրոֆեսիոնալ թատրոն չէր անշուշտ, սակայն նա ուներ կազմակերպություն, քանի որ նրա ղեկավարն էր ուսանողական միությունը՝ չքավոր հայ ուսանողներին նպաստ և ուսման վճար տվողը: Այս հանգամանքը պահանջ էր դնում ուսանողական ընկերության առաջ՝ ամեն կերպ պահպանել թատրոնը, նրա ռեպերտուարի համար նոր պիեսներ գտնել, նոր գերակատարներ ունենալ:

Մոսկվայի ուսանողական, հայկական թատրոնի ռեպերտուարի հարցը առաջնակարգ նշանակություն ունեցող հարց էր:

Ուշագրավ փաստ է, որ այդպիսի ռեպերտուարի ապահովման համար պայքարող ուսանողները, ոչ այնքան դիմել են գոյություն ունեցող գրաքար անկենդան պատմական ողբերգություններին կամ թարգմանական պիեսներին, որքան ձգտել են զարկ տալ ինքնուրույն գրամատուրգիայի ստեղծմանը:

Մոսկվայում գերազանցապես բեմադրվել են հենց ուսանողների կողմից գրված պիեսները, ուսանողներ, որոնցից մի քանիսը հետագայում էլ իրենց արժանի տեղը նվաճեցին հայ թատրոնի պատմության մեջ ինքնուրույն թատերական-բեմական գործունեությամբ և թե՛ գրամատիկական ստեղծագործություններով:

Այստեղ մենք թվարկում ենք այն հեղինակների անունները, որոնք մասնակցել են Մոսկվայի հայկական թատրոնի կազմակերպման աշխատանքներին:

Անանիա Սուլթանյան—«Հայոց ազգի լուսավորիչը» (1859)

Հովհաննես Գուրգենբեկյան—«Հաջի-Սուլեյման» (1868)

Նիկողայոս Ալադաթյան—«Վայ, իմ կորած հիսուն ոսկին» (1859)

Ալեքսանդր Քիչմիշյան—«Քաղաքի աղաթը փոխվել է» (1865)

Գրիգոր Երեցփոխյան—«Հնարագետ կինը» (1865)

Միքայել Պատկանյան—«Միջի մարդ կամ մոցիքուլ» (1859)

Միքայել Տեր-Գրիգորյան—«Ժլատ»

Նիկողայոս Փուղինյան—«Դավալ լաղո» (1860):

Ուրեմն Մոսկվայի համալսարանի ուժեղ հայ ուսանողներ տասը տարվա ընթացքում գրել են գրամատիկական ինքնուրույն գործեր, իրենց գրած պիեսները ներկայացրել են Մոսկվայի թատրոններում, հասարակա-

կան կարծիք ստեղծել, ոչ միայն իրենց ստեղծագործության շուրջը, այլև հայ թատրոնի կազմակերպման, նրա ուղղության, նրա հետագա զարգացման, դրամատուրգիական ժանրերի և ուրիշ շատ կարևոր հարցերի շուրջը։ Վերոհիշյալ ութը երիտասարդներից Մ. Պատկանյանը, Ն. Փուղինյանը, Ալ. Քիշմիշյանը, Մ. Տեր-Գրիգորյանը, Գր. Երեցփոխյանը հետագայում զբաղվել են թատրոնով, գրել են պիեսներ։ Նրանց գրած դրամատուրգիական գործերը բեմագրվել են և տպագրվել։

Մեր կուլտուրայի, գրականության, թատրոնի պատմության հարցերով զբաղվող մարդիկ այս կամ այն կապակցությամբ նշել են, որպես առանձին փաստ, վերոհիշյալ ութը հայ դրամատուրգների անունները, հիշել են նրանց գրական գործերը պատմական այս կամ այն խնդրի լուսաբանության առթիվ։ Ձի եղել մի այնպիսի գործ, որի մեջ գեթ ընդհանուր գծերով ներկայացվել թատերական այս շարժումը որպես մի ամբողջական փուլ՝ հայ թատրոնի, առավելապես դրամատուրգիայի պատմության մեջ։

Մինչդեռ, մենք գտնում ենք, որ Մոսկվայի 1858—1868 թթ. տասնամյակի հայ թատերական և դրամատիկական շարժումը իրավամբ պետք է համարվի այնպիսի մի ուրույն շրջան։ Այդ հենց նախաստեղծությանական հայ դրամատուրգիայի շրջանն է, որը պայմանական կերպով կարելի է անվանել «Մոսկվայում զարգացող հայկական դրամատուրգիայի դպրոց» և որը ողջական ռեալիստական դրամատուրգիայի տրագիկաներով զարգանալով զգալի դեր կատարեց Գ. Սունդուկյանի դրամատուրգիայի նախապատրաստման գործում։

«Մոսկվայի հայկական դրամատուրգիայի այդ դպրոցը» հակապատկերն էր կեղծ պատմական, այսպես կոչված, հայրենասիրական դրամատուրգիայի, որի դեմ պայքար էին սկսել Մոսկվայի հայ ուսանողները Մ. Նալբանդյանի ղեկավարությամբ։

Մոսկվայի հայ թատրոնը և Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների կողմից ստեղծված կենցաղային դրամատուրգիան նշանակալից դեր է կատարել նաև դրարար¹ մեռած լեզվի դեմ մղվող պայքարում, աշխարհաբար խոսակցական լեզուն գրականության աստիճանի բարձրացնելու ընագավառում, ըստ էության շարունակելով Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Պ. Պոռշյանի և ուրիշների սկսած գործը։

Մոսկվայի հայ թատրոնի կազմակերպմանը մասնակցող հայ ուսանողներից շատերը հանգես են եկել նաև որպես դերակատարներ։

Նիկողայոս Այադաթյանը իր գրած «Վայ իմ կորած հիսուն ոսկի» կատակերգության մեջ խաղացել է Կարապետի դերը։ Միքայել Նալբանդյանը իր «Հիշատակարանում» գրվել է ոչ միայն հեղինակի պիեսը, այլև նրա խաղը բեմի վրա։ «Այդ բանի մեջ ներգործողքը շատ գեղեցիկ ներգործեցին, մանավանդ ինքը հեղինակը, ասես թե գնած Կարապետ լիներ...»։

Մոսկվայում սովորող ուսանողներից Սեդրակ Մանգինյանցը և Վաղարշակ Շահյանթունյանցը հենց ուսանողության տարիներին աչքի են ընկնում որպես շնորհալի դերակատարներ։ Նրանցից Սեդրակ Մանգինյանցը հաջողությամբ է ձեռք բերում զլխավորապես կատակերգություններում, իսկ Վաղարշակ Շահյանթունյանցը՝ ողբերգություններում։

Նրանք երկուսն էլ հետագայում Թիֆլիսում խաղացել են հայ բեմում։

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 392։

Մոսկվայի հայկական, ուսանողական ներկայացումներին մասնակցողներից հարկավոր է նշել՝ աստրախանցի Մկրտիչ Իսկրջալյանին, ղղարեցի Աստվածատուր Կաճկաճյանին, թիֆլիսեցի Ալեքսանդր Գիշմիշյանին, որոնք մասնակցել են նաև՝ դրամաների, նաև կատակերգությունների բեմադրություններին:

Ուսանող-դերասաններից հարկավոր է նշել նաև Միքայել Տեր-Գրիգորյանին, որը ինչպես հայտնի է, իր կենցաղային պիեսներով նշանակալից դեր է կատարել հայ ռեալիստական դրամատուրգիայի զարգացման գործում: Այլ Գիշմիշյանը իր հուշերում պատմում է մի ուշագրավ էպիզոդ Տեր-Գրիգորյանի մի դերակատարման մասին:

Բեմադրվել է Մուխոմի Բոնի ամուսնությունը՝ հայերեն թարգմանությամբ: Սեդրակ Մանգինյանը և Միքայել Տեր-Գրիգորյանը խաղացել են երկու փիլիսոփաների դերերը: Փորձերի ժամանակ ոչ մի առարկություն չի եկել դերակատարների նկատմամբ: Ներկայացումը տեսելու համար (որ տեղի է ունեցել Լազարյան ճեմարանում) դալիս է Ստեփանոս Նաղարյանցը և գրավում առաջին կարգի աթոռներից մեկը:

Երբ Տեր-Գրիգորյանցը դուրս եկավ բեմ և սկսեց խոսել Ս. Նաղարյանցի խոսելու ձևով, — պատմում է Գիշմիշյանը, — հասարակության մեջ մեծ փոթկոց առաջացավ, ևս էլ չկարողացա ծիծաղս պահել, այնքան անակնկալ էր այդ բանը մեզ համար...»:

Հայտնի է, որ հայ թատրոնի զարգացման առաջին տարիներին մեծ դժվարություն էր ներկայացնում դերասանուհիների ապահովման հարցը: Այդ բանը առավել ևս նկատվել էր հայ իրականությունից հետո Մոսկվայում, որտեղ ապրող հայ բնտանիքներից և ոչ մեկը չէր համաձայնում բնդառաջել և թույլ տալ, որ կանայք կամ աղջիկները բեմ բարձրանան: Ուստի, կանանց դերերը կատարել են տղամարդիկ: Կանանց դերերում որոշ հաջողություն են գտել, մասնավորապես Գարրիկ Թուրյանցը, Ալեքսանդր Հարությունյանը և Ալեքսանդր Գիշմիշյանը:

Լազարյան ճեմարանում, որտեղ, ինչպես ասացինք, հայկական ներկայացումներին մասնակցում էին աշակերտները, մի անգամ Վրչակ երկրորդը՝ ողբերգության մեջ Փառանձեմ թագուհու դերը խաղացել է Պողոսյանյակով աղվանուհու գեղեցկագույն մի աշակերտ՝ առանց գրիմի:

Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության կողմից կազմակերպված թատրոնի աշխատանքներին նույնպես, բացի հայերից, երբեմն մասնակցել են նաև ուրիշ ազգության պատկանող ուսանողներ, օրինակ՝ ռուսներ, վրացիներ:

Միքայել Նալբանդյանը իր չնչառակարանի մեջ գրում է.

«Մի բան ևս չըպետք է թողնել առանց ուշագրության, այլ Ջափաջիձե վրացի ուսանողը մասնակից լինելով թատրոնական գործողությանը հայերեն երգելու ժամանակ, յուր վրա դարձուց մեր մասնավոր ուշագրությունը»:

Մոսկվայում կազմակերպված վերոհիշյալ բեմադրությունները արձագանքում էին հայ հասարակական կյանքը հուզող հարցերին:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լրակատար ժողովածու, հատ. I, էջ 392:

Պատահական չէ, որ հենց առաջին ներկայացումը այնպիսի սրու-
թյամբ պայքար ստեղծեց Մ. Նալբանդյանի և Մսեր Մադիստրոս Մսեր-
յանցի միջև։ Այդ պայքարն աննշան չմնաց և ուսանողության շրջաննե-
րում։ Բանը հասավ նրան, որ հայերեն լեզվով ներկայացումները ընդհատ-
վեցին ժամանակավորապես։ Այլ Քիշմիշյանը այդ առթիվ գրում է.

«Մի քանի կուլասեր և անբարիշտ ուսանողներ, որոնց անունները
հիշատակել այստեղ միտք չունի, քայքայել էին ուսանողական ժողովը»։

1863 թվականին «ուսանողական ժողովը», թատրոնական կազմակեր-
պությունը նորից վերականգնվում է և շարունակում իր ընդհատված աշ-
խատանքը։

Ալեքսանդր Քիշմիշյանի ակնարկած «կուլարար և անբարիշտ ուսա-
նողներ» անունները մեզ հայտնի չեն, այն օրերի ականատես մարդիկ
իրենց հուշերում ինչ-ինչ նկատառումներով չեն հրապարակել ոչ այդ
մարդկանց անունները, ոչ էլ «ուսանողական ժողովի» կազմալուծման պա-
րագաները։

Մի բան միանգամայն պարզ է. առանձին «կուլարար և անբարիշտ»
ընկերություն տեղ ուսանողների պատճառով չէ, որ մի երկու տարի «ու-
սանողական ժողովը» գաղարկել է գործելուց։ 1861 թվականին տեղի ունե-
ցած ուսանողական շարժումը, նրա ելևէջները, կառավարութայն ձեռնար-
կած խիստ միջոցները 1861—62 թվականի ձմռանը Մոսկվայի համալսա-
րանի ուսանողական շարժման թուլացումը, այս բոլորը, անշուշտ, ազդել են
նաև հայկական «ուսանողական ժողովի» գործունեության վրա։

Այդ շրջանում Մոսկվայի հայ ուսանողական շրջաններից հեռու էր
գտնվում Միքայել Նալբանդյանը, իսկ նրա հետ անմիջապես աշխատողնե-
րից շատերը ավարտել էին համալսարանը և Մոսկվայից հեռացել։ Այս
հանգամանքը ևս պատճառ է դարձել հայկական «ուսանողական ժողովի»
աշխատանքի թուլացմանը 1861 թ. ձմռան ամիսներից սկսած։

* *

Այսպիսով, Մոսկվայի համալսարանի և առհասարակ Մոսկվայում սո-
վորող հայ ուսանողները XIX դարի 50—60-ական թվականներին խոշոր
աշխատանք են կատարել հայ իրականության մեջ, նպաստելով նորաստեղծ
հայ թատրոնի դարգացմանը, ռեալիստական դրամատուրգիայի ստեղծմա-
նը։ Կուլտուրական-թատերական այս շարժման ոգեշնչողն ու գլխավորողը
եղել են Մ. Նալբանդյանը և նրա գաղափարական բարեկամները՝ Ա. Սուլ-
թանշահը, Գ. Տեր-Հովհաննիսյանը և ուրիշները։ Մասնավորապես Մոսկ-
վայի հայ թատրոնի 1858—1868 թթ. տասնամյակի գործունեությունը
նշանակալից երեւոյթ է հայ կուլտուրայի պատմության մեջ և արժանի է
հանգամանալից ուսումնասիրության։